

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԼՈՒՐԵՐ Ս. ԷՇՄԻԱՇՆԵՆ

Մայր Աթոռէն ստացուած թղթակցութենէ մը կիմանանք ուրախութեամբ թէ Ամենայն Հայոց վեհ։ Սրբազն Հայրապետը առողջ է և հռանգով կը զեկափարէ Մայր Աթոռի վերաբերեալ բոլոր գործերը, առողջ են նաև բոլոր միաբանները, վերչերս միայն՝ վախճանած է Սրբապին եպիսկոպոս, 85 տարեկան։

Գիրագոյն Հոգեսր ժողովը աշխարհիկ երկու պատգամաւորներու մասնակցութեամբ քննութեան նիւթ ըրած է Ծննդանուր Եկեղեցական ժողովէն յանձնարարուած Մասնակազրութեան եւ Բարեփախութեան խնդիրները, որոնց ձեւակիրարուած նախագիծները շուտով պիտի ուղարկուին Սփիւռքի նույիրապետական Աթոռներուն և թեմական ժողովներուն։

Հայրապետական Եկաղօր ներկայացուցիչ ուղարկման խնդիրը ստացած է իր վերջնական լուծումը, կը յուսացուի որ ի մօտոյ պիտի հարբանանք մեր մէջ ողջունել Մայր Աթոռոյ Պատուիրակին ներկայութիւնը։

Կը յուսանք նաև որ Սինի մօտաւորագոյն մէկ թիւին մէջ պիտի ունենանք մանրամասնեալ տեղեկութիւններով ի յօդուածներ Մայր Աթոռոյ մէջ մեր թղթակից «իրազեկէն։

ԱՄՍՈՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցնող Յունիս ամսուան ընթացքին, Ս. Աթոռոյ Տիուել ժողովը տասն անգամներ ի նիստ գումարուեցաւ իրեւ Վարչական Մարմին իսկ Անունն. Խորհուրդը՝ երկու անդամ, իւրաքանչիւրը զրադեւով իր իրաւասութեան մէջ եղած խնդիրներով։

● ԾԲ. Յունիս.— Բատ աւանդական սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ ի վերայ տանեաց, Ս. Հոգի մատուախն մէջ։

— Հնդկանց Պ. Զարլզ Արգար, ի զարձին եղիստոսէ ի Պարսկաստան՝ անցնելով երուսաղէմէ, այսօր այցելեց Ս. Պատրիարք Հօր։

● Կիր. 3 Յունիս.— Ս. Պատարագը Զուղայի հղանակով մատուցուեցաւ Ս. Յարութեան վերնամատրան մէջ՝ Քարոզեց Տ. Զգոն վրդ., Հնախանձեցայ զնաբանն Տեսուն» բնարանով, և ցոյց տուաւ եղիւա մարզարէի նախանձայոյդ ողին հնովայի եւ իր ճշմարիտ կրօնըին նկատմամբ։

— Կէս օրէ վերջ, Ս. Պատրիարքը և Պ. Զարլզ

Արգար պատոյած մը ըրին գէպի երիքով, Յորդանան և Մեռեալ ծով։

● ԲՇ. 4 Յունիս.— Վեհ. ձորձ և թագաւորին ձննդեան տարեկարձին առթիւ, Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Կիրեղ Վրդ.ի ներկայ գտնուեցաւ, առաւոտուն՝ մեծ զօրահանգէսին, ապա անկիլիքան եկեղեցւոյ մէջ կատարուած Գոհարանական Մաղթանքին, եւ երեկոյին՝ Բարձր Գոհիսէրին աղարանքին մէջ՝ մեծ թէյասեղանին։

● ԲՇ. 5 Յունիս.— Գիշերս իր մանկանացուն կնքած ըլլալով, այսօր յուղարկաւորութիւնը կատարուեցաւ վաղեմի ուսուցիչ Պ. Կարապետ Համաձնանի, որ քանի մը տարիներէ ի վիր վանուցց մէջ կը մնար հիւանդագին եւ անկեալ միհակի մէջ Տիշեալը աւելի քան եօթանատանձինգամեայ ծերունի մըն էր, բնիկ կ, Պոլսեցի, որ իր ուսումն առած էր իւսկիւտարի Ս. Խաչ Եկեղեցւոյ զպրոցը ինքնաշխատութեամբ զարգացած, իլրե Քրանսերէնի և թուրքերէնի ուսուցիչ երկար տարիներ զաշտոն վարած էր կակչէնիր եւ Եղեսիա եւ այլուր, ատեն մը նաև հոս Երուսալմէմ, և պատերազմէն ետքը՝ ի Սիւրբիա Անտուն, անընտանիք, անոք, անօդնական, իր վերջին տարիներուն, երբ այլեւս ոչ մէկ բանի կրնար օգտակար ըլլալ, նէք մտաւորականը հազիւ կրցեր էր ինքզինքը նեսել Ս. Քաջաքը, հոն վակելու համար տարտղնուած կեանքին վերջալոյուր։

● ԲՇ. 6 Յունիս.— Վերջ գտաւ աշխատութիւնը, որով անցորդ արուեստագէտ մը Պատրիարքարանի սրահներուն համար նկարեց Ամենայն Հայոց Հայրապետաներէն Տ. Տ. Դուկաս Կարնեցի, Եփրեմ Չորագեղացի, Յոզէանէս Կարեցի, Ներէս Աշտարակեցի, Մատթէոս Ա., Քորդ Դ., Մակար, Խրիմեան Հայրիկ, Մատթէոս Ակմիրեան, Դուրգ Ե., և Խորէն Ա., Կաթողիկոսներու, և Ս. Աթոռոյ հանգ պատրիարքներէն Տ. Տ. Դորիգոր Պարունակէրի, Եղիշաղար Անթէոզցիի, Մինա Համբեցցիի, Դրիգոր Եղմայակիրի, Թէոդորոս Խորենացցիի, Կարապետ Գանձակեցցիի, Պատրոս Եւղոկիացցիի, Թէոդորոս Վանեցցիի և Կիրակոս Երուսաղէմացցիի իւղաներկ նկարները, Պատրիարքներու պատկերներէն շատերը գրչագիրներ։ Իւր ի թափած որմանկարներէ առնուեցան։

Կը մնան զեւ. Տ. Տ. Յակոբ նալեան, Գարբիկէ նիկոմիդացցի, Զաքարիա Կոփեցի և այլոց պատրիերները, և Ս. Աթոռոյ վարչութիւնը շնորհապարտ կը լւայ ևթէ զանոնք ունեցողները՝ տեղեկութիւն հաղորդեն իրեն։

● ԲՇ. 7 Յունիս.— Ս. Պատրիարքը, Տ. Եղիշէ Վրդ.ի համ, Յոզպէ իջաւ ի տես Տ. Ամբատ Ալբրագանի, որ քանի մը օրերէ ի վեր, հիւանդութեան պատճառաւ, հոն կը մնար, և որ երեկոյին միասին դարձաւ։

— Տ. Տիրան վլրդ.՝ որ Մարտէլ գացած էր մասնաւոր պաշտօնով, վերադարձաւ՝ իր դուքը յաջողութեամբ կատարելէ վերջ:

● Եթ. 9 Յունիս. — Ա. Պատրիարքը երեկոյին, կիրակամատաւ ժամերգութենէն վերջ վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութեան չորս աստիճանները տուաւ Տ. Տ. եղիչէ, Հայրիկ, Տիրայր և Ասողիկ արեղաններուն, որոնք երկու տարի առաջ ձեռնադրուած էին, և իրենց թէղերը վերջին յանձնած էին ն. Ա. այս առթիւ խրատական ուղերձ մը ըրաւ իրենց ։ Ժամերգութենէն վերջ չնորհաւորական խմբում տեղի ունեցաւ Պատրիարքարանի Դահիճին մէջ:

● Կիր. 10 Յունիս. — Տօն կաթողիկէի առթիւ Ա. Պատրիարքը քարոզեց Մայր տաճարին մէջ, օրուան Դիրքէն առնելով թէլադրական մտածումը, բացատրեց թէ Եկեղեցին, իրեւ կրօնական հաստատութիւն, պէտք է հիմնաւած ըլլայ հաւատարի, իմաստութեան (այսինքն մաքուր զիտութեան), նուրիումի և սուրբ նախանձափրութեան վրայ. Հայ Եկեղեցիին վրայ մատնանշեց այդ ստորագելիները, և յորդոր ուղղեց իր այդ նկարագրին մէջ գնահատել զինքը, և ըստ այնու ծառայել իրեն:

● Դէ. 13 Յունիս. — Կէս օրէ վերջ անդի ունեցաւ Ընդհ. ժողով, ուր յետ քննութեան՝ վաւերացուեցան պարտուց բարձման և Պուրեան հիմնարամի պիտունէները, զորս Տնօրէն ժողովը ներկայացուցած էր:

● Են. 14 Յունիս. — Ա. Պատրիարքը, Մըրազան և յայիկովոսներ, Տնօրէն ժողովոյ անդամները, Դիւաններու տեսուչ վարիչները, դիւանի պաշտօնեանները, եւնու, օրն ամբողջ անցուցին Պարու - Տէրի հօվոցը:

● Եթ. 16 Յունիս. — Երեկոյեան ժամերգութենէն վերջ, Պատրիարքարանի Մէծ Դահիճին մէջ Ա. Պատրիարքը, ի պատիւ Տնօրէն ժողովոյ և Տնօրէն Վարդապետաց, թէյասեղան մը տուաւ Միարանութեանու իր գնահատական խօսքերուն ի պատասխան՝ սրտապնդիչ և սիրալիր ուղերձները ըրին Տ. Մըրատ Մըրազան, Տ. Տիրան եւ Տ. Միռն Վարդապետներ:

● Կիր. 17 Յունիս. — Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յարութեան մեր վերնամատրան մէջ: Տ. Մերուլիք Վլրդ. քարոզեց «Եղերուք կատարեալը, որպէս եւ հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» բնարանին վրայ, բացատրելով թէ մարդուն նպատակն է ձգտիլ կատարելութեան որուն տիպարը նոյն ինքն Քրիստոս է, եւ թէ ինչպէս կրնանք մեր մէջ եղող կարելիութիւնները զարդացնելով հասնիլ անօր:

● Բէ. 18 Յունիս. — Ա. Պատրիարքը Հօր այցելեց Ամերիկեան Փոխ-Նիւպատռու Մըր, ԳլէչՓօրտ:

● Շէ. 19 Յունիս. — Եղիոպասի ներկայ Բրիտ, Բարձր Գոմիսէրը Սըր Մայր Լէմբրին, առաջնորդութեամբ Սրուսաղէմի Փօխ-Նիւպատռ Վարիչը Բոմիսէրութեան արեւելիան բաժինի Քարտուղարին հետ, այցելեց Մայր տաճարը, յևոյ Պատրիարքարան, և ընդունեց թէյատեզանի պատիւը, զոր Ա. Պատրիարքը, Եպիսկոպոսաց ընկերակցութեամբ մատոյց ն. Վահմութեան:

● Ոիր. 22 Յունիս. — Ա. Պատրիարքը Յոզպէ իջաւ Տ. Եղիչէ Վլրդ. կ հետ, վանական գործով, և երեկոյին վերադասներով նախագահնեց Տնօրէն ժողովով նիստին:

● Եթ. 23 Յունիս. — Երեկոյին, Ծնձայարանի սրահին մէջ բանախոսնց ուսուցիչ Պ. Ն. Թամամեան՝ «Եկեանք եւ դիտակցութիւն» նիւթին վրայ: Ասկէց առաջ, ներկայ տարուան ընթացքին, նոյն սրահին մէջ եղած էին հետեւեալ բանախոսութիւնները. Տ. Տիրան Վլրդ. նիւթ՝ «Արդարութեան անարդարութիւնը»: Պ. Ն. Միաւեհան նիւթ՝ «Վաղաքակրթութեան ընթացքը մարգկութեան մէջ»: Տ. Նորայր Վլրդ. նիւթ՝ «Ռուբինեանց չքչանի թրանկներու կամ Լատիններու հայոց հետ ունեցած յարաբերութիւնը»: Ժառանգութիւնը՝ սաներէն Երեամ Բարութեան վրայ, և բացատրեց թէ օրէնքը՝ «Քաղաքակրթութեան հիմն է, չի կրնար կատարել կրօնական զգացումին զերը որ գերի վերոց քան օրէնքը, ի պուն համաձայն մարդու կ'ապրի առանց ունինալու զատազարտութեան երկիւղը»:

● Կիր. 24 Յունիս. — Մայր տաճարին մէջ քարոզեց Տ. Կիր Երեղ Վլրդ. «Ոչինչ զատազարտութիւն է այնոցիկ որ ի Քրիստոս Յիսուս» (Հոռմ. Ը. 1) բնարանին վրայ, և բացատրեց թէ օրէնքը՝ «Քաղաքակրթութեան հիմն է, չի կրնար կատարել կրօնական զգացումին զերը որ գերի վերոց քան օրէնքը, ի պուն համաձայն մարդու կ'ապրի առանց ունինալու զատազարտութեան երկիւղը»:

● Են. 28 Յունիս. — Ա. Սահակ և Ա. Մեսրոպ թարգմանչաց տօնին առթիւ Մայր տաճարին մէջ այսօր Ա. Պատարագ մատոյց «Արքոց Թարգմանչաց Վարժարանի տեսուչ Տ. Կիր Վլրդ.» ու Ա. Պատրիարքը քարոզեց, վերուժելով օրուան շարականը, «Արք զարդարեցին»: Գրական հանդէսից պիտի անդի ունենայ յառաջիկայ կիրակի:

● Ոիր. 29 Յունիս. — Յանուն Ա. Պատրիարքին, Տ. Կիր Երեղ եւ Տ. Տիրան Վարդապետների ներկայ գանուեցան Թէռա Սանդայի Վարժարանի տարեկան մրցանակաբաշխութեան հանդէսին: